

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» աշխատության երկրորդ հատորը կազմված է XVI—XVIII դարերի թուրք պատմագիր-տարեգիրների և այլ հեղինակների երկերից, որոնք կարևոր տեղ են գրավում թուրքական պատմագրության մեջ: Այդ հեղինակները, իրենց երկերում տալով այդ դարերի Թուրքիայի ներքին և արտաքին դրության պատկերը, միաժամանակ որոշակի հետաքրքրություններ կայացնող բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում հայ և հարևան ժողովուրդների պատմության, պատմական աշխարհագրության և սոցիալ-քաղաքական կյանքի մասին:

Ներկա հատորում առանձին գլուխներով ներկայացված են հետևյալ թուրք պատմագիրներն ու հեղինակները.

1. Քյարիբ Չելեբի (Հաջի Խալիֆա), Օսմանյան պետության XVII դարի ականավոր պատմագիր-աշխարհագրագետ: Նյութերը քաղված են նրա «Ջիհան նյումա» խորագիրը կրող աշխարհագրությունից և «Ֆելեֆե» անունով հայտնի երկհատոր պատմությունից:

2. Սելանիկի Մուստաֆա—XVII դարի թուրք պատմագիր:

3. Սուլաֆ Զադե—XVII դարի թուրք պատմագիր:

4. Շանհ Զադե—XVIII դարի արքունական տարեգիր-պատմագիր:

5. Մյունեջջիմ Բաշի—Թուրքերեն լեզվով առաջին ընդհանուր պատմության հեղինակը, որից թարգմանված է հայ ժողովրդի համառոտ պատմությունը:

6. Ֆերիդուն Բեյ—XVI դարի թուրքական պետական բարձրաստիճան պաշտոնյա, որը իր «Սուլթանների գրություններ» անունով հայտնի պետական պաշտոնական փաստաթղթերի ժողովածուի մեջ հավաքել է Օսմանյան կայսրության սկզբից մինչև XVI դարի վերջն ընկած ժամանակաշրջանի սուլթանական բազմաթիվ ֆերմաններ և գրություններ:

7. Կոչի Բեյ — Թուրք պետական գործիչ և քննադատ, որը XVII դարի 30-ական թվականներին սուլթաններին ներկայացրել է երկու զեկուցագիր (Ռիսալե), Օսմանյան կայսրության ներքին գրության մասին:

Վերոհիշյալ բոլոր հեղինակների մասին տրված են համառոտ կենսագրական տեղեկություններ, ինչպես նաև անհրաժեշտ լուսաբանություններ նրանց երկերի մասին:

Գրքում որպես հավելված զետեղված են.

1. Ֆերիդուն Բեյի «Սուլթանների գրություններ»-ից մի քանի փաստաթղթերի թարգմանությունը, որոնք որոշ լույս են սփռում Օսմանյան պետության միջնադարի պետական, վարչական և տնտեսական կյանքի բնորոշ կողմերի վրա:

2. Տարեգիր Շանի Ղադեից XVI—XVII դարերի Թուրքիայի ֆինանսական, կուլտուր-կենցաղային (հագուստ, բնակարան և այլն), ինչպես նաև ազգային խտրականության վերաբերյալ պաշտոնական փաստաթղթեր:

3. Մի քանի փաղիշահական գրությունների (ֆերման, ուղերձ և այլն) թուրքերեն տեքստերը:

Այս հատորում ծանոթագրությունները տրված են ավելի ընդարձակ, անհրաժեշտության դեպքում՝ պատմական ակնարկի ձևով: Ծանոթագրությունները լուսաբանում են միջնադարյան Թուրքիայի պատմագիր-տարեգիրների և մյուս հեղինակների երկերում արժարժված բազմաթիվ հարցերը և հնարավորություն են տալիս ավելի լայն և բազմակողմանի պատկերացում կազմելու միջնադարյան Թուրքիայի մասին:

Թարգմանված բոլոր նյութերի տարեթվերը տրված են հիշրեթի թվականով, ինչպես տալիս են Թուրք հեղինակները, այդ թվականների կողքին փակագծում տրված են նաև համապատասխան եվրոպական թվականները*:

* Տե՛ս նաև սույն աշխատության Ա հատորում «Հիշրեթի թվականները եվրոպականի վերածելու աղյուսակը», էջ 339—348: